

ԳՐՔՈՅԿ
ՄԻՒՌՆՈՐՀՆՈՒԹԵԱՆ
ԱՌԻԹՈՎ

Հրատարակուրթիւս
Հայ Եկեղեցւոյ ԱՄՆ Արեւմտեան Թեմի

Պրոպէս
2024

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՍՐՏԻ ԽՕՍՔԸ

Սիրելի՛ ուխտաւորներ,

Տարւոյս Սեպտեմբեր 28 եւ 29 օրերը ողջ հայութեան համար հոգեւոր ուրախութեան առիթներ պիտի ըլլան, երբ հազարաւոր ուխտաւորներ աշխարհի տարբեր երկիրներէ պիտի փութան Մայր Հայրենիք, Սուրբ Էջմիածին, մասնակցելու տեղի ունենալիք միւլտնօրհնութեան եւ Մայր Տաճարի վերածման հոգեպարար արարողութեանց: Հայրենի մեր ժողովուրդին հետ հետեւաբար մենք եւս կը պատրաստուինք մասնակցելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի ունենալիք հոգեւոր կարեւորագոյն իրադարձութեանց՝ Սրբալոյս Միւլտնի օրհնութեան եւ քրիստոնէական հնագոյն ու պատմական սրբավայրերէն՝ Մայր Տաճարի վերածման: Ինչպէս գիտէք Միւլտնօրհնէքը Հայ Եկեղեցւոյ ամէնէն սրտառուչ եւ խորհրդաւոր արարողութիւններէն մէկն է:


Այդ օրերը, ամբողջ հոգեւորականաց դասը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորութեամբ եւ մասնակցութեամբ, աշխարհացրիւ մեր թեմերու թեմակալ առաջնորդներուն, պիտի համախմբուինք Մայր Աթոռի շուրջ եւ վերանորոգենք մեր ուխտը ծառայելու Աստուծոյ ու ազգին: Եպիսկոպոսներ իրենց հանդերձանքով, վարդապետներ ու քահանաներ շուրջառ առած իրենց ուսերուն, նուիրեալ սարկաւազներ ու դպիրներ իրենց կարգի շքեղութեամբ, բոլորով պիտի կազմուի հսկայ թափօր մը, գլխաւորութեամբ Վեհափառ Հայրապետին: Բոլորս հոգեկան հրճուանքով հաղորդակից պիտի ըլլանք Էջմիածնի նուիրական սրբութիւններուն՝ Կենաց Փայտին, Սուրբ Գեղարդին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջին, հին միւլտնին, բալասանին եւ ուրիշ անուշաբոյր իւղերու, սուրբերու մասունքներու եւ խաչերու: Պիտի զօղանջեն հնադարեան Մայր Տաճարի զանգերը եւ անոնց ձայնը պիտի

միախառնուի դէպի երկինք բարձրացող մեր սրտի ջերմեռանդ ու երկիւղած աղօթքներուն հետ:

Սուրբ Էջմիածինի ոգեշունչ սրբավայրի բաց երկինքի տակ մեր եկեղեցական, հոգեւոր եւ մշակութային արժէքները անգամ մը եւս պիտի զարթնուն մեր ժողովուրդի կեանքին մէջ: Միւռոնօրնութիւնը, մեր պատմութեան ճակատագրական այս օրերուն, անկիւնադարձային հանգրուան մը թող ըլլայ, ազգովին համախմբուելու մեր Հայրենիքին ու Մայր Աթոռ Ս. Էջմիածինին շուրջ եւ նոր միւռոնին մէջ կերտենք մեր փայլուն ապագան: Միւռոնը մեր կեանքի հորիզոնին վրայ թող ըլլայ լուսաշող կայծ մը, լոյսի ու յոյսի ճառագայթ, մեր ցաւերուն դարման բալասան: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի սերունդէ սերունդ ժառանգուած օրհնութիւնն է, որ պիտի ստանանք եւ մաքրուինք ու լուսաւորուինք եւ դարձեալ լեցուինք աստուածային սրբութեամբ եւ հաստատուն քայլերով քալենք այն ճանապարհէն, որ մեր հոգու առաջ դէպի երկնային լուսոյ յաւիտեանական խորանները կը բանայ:

Կը հաւատանք ու կ'աղօթենք առ ամենաբարին Աստուած, որ նոր միւռոնը անսասան պահէ մեր Հայրենիքը ու Մայր Աթոռը, արեւշատ օրեր պարգեւէ Հայոց Հայրապետին եւ անշէջ պահէ մեզ յաջորդող սերունդները, բազմադարեայ հարուստ ժառանգութեամբ շարունակելու մեր կեանքի ընթացքը:

Օրհնութեամբ՝

Յովնան Արք.

Յովնան Արք. Տէրտէրեան

Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի

Արեւմտեան Թեմի

ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԻՆԸ Ս. ՄԻՌՈՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ

Իրաքանչիւր հայու համար Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը նուիրական արարողութիւն է: Սուրբ Միւռոնի խորհուրդին շուրջ է, որ կը միանան բոլոր հայերը: Հետեւաբար, Սուրբ Միւռոնը միաւորիչ ուժն է աշխարհասփիւռ հայութեան համար:

«Միւռոն» բառը յունարէն բառ մըն է, որ կը նշանակէ հոտաւետ իւղ կամ բոյսէն հոսող հիւթ: Հին ժամանակներուն, արեւելեան ազգեր եւ մանաւանդ հրեաներ ձիթենեաց իւղ կը գործածէին իրենց ծիսական-աստուածապաշտութեան մէջ:

Հին Կտակարանին մէջ կը կարդանք, թէ ինչպէ՞ս Աստուած ինք Սովսեսին պատուիրեց օծելի իւղ պատրաստելու կերպը, զանազան կրօնական սպասներ օծելու նպատակով (Ելք 30.22-33): Սրբագործուած այդ սպասները կը գործածուէին ծիսական արարողութիւններու ժամանակ: Յիսուս Քրիստոսի աշխարհ գալուստով օծման նշանակութիւնը վերաիմաստաւորուեցաւ: Յիշենք, որ «Քրիստոս» բառը, որ դարձեալ յունական արմատ ունի, կը նշանակէ Օծեալ:

Ս. Միւռոնը մշտապէս կը յիշեցնէ բոլորիս, թէ մենք իբրեւ քրիստոնէաներ մկրտուած ու վերածնուած ենք Հայ Եկեղեցոյ Սուրբ Աւագանէն, մեր ճակտին վրայ կրելով Ս. Հոգւոյ խորհրդանիշ Ս. Միւռոնի կնիքը: Այս խորհուրդով եւ խոր

գիտակցութեամբ ապրինք ու շարունակենք մեր կեանքի ընթացքը Սուրբ Էջմիածինի օրհնութեան ներքեւ:

Իւրաքանչիւր հայ, որ իր ճակատին վրայ կը կրէ Ս. Միւռնը, այդ կը դառնայ մաքրութեան, միութեան եւ անջնջելի ազգային դրոշմի խորհրդանիշ: Ս. Միւռնի օծումը ստանալով կը դառնանք իրարու հարազատ եւ կ'ուխտենք, մեր ողջ կեանքի ընթացքին հաւատարիմ մնալ այդ օծութեան ու հարազատութեան:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ յառաջիկայ Հոկտեմբերին կայանալիք Միւռնօրհնէքը անգամ մը եւս կու գայ հաստատելու Սրբալոյս Իւրի իւրայատուկ կարեւորութիւնն ու դերակատարութիւնը Հայրենիքի թէ՛ Սփիւռքի աշխարհացրիւ մեր ժողովուրդի հոգեմտաւոր կեանքին մէջ:

ՄԻՒՈՆԻ ԿԱՅԱՆ

Միւռնի կաթսան 1895 թուականի Յունուար 1-ին Ս. Էջմիածինին նուիրաբերած է Նոր Նախիջեանի վաճառականներէն՝ Աղա Գասպար Յարութիւնեան Կարապետօղլեան: Կաթսան պատրաստուած է Մոսկուայի Պ. Օվչինսկովի արհեստանոցին մէջ եւ շուրջ հարիւր քսան տարիէ ի վեր կը գործածուի: Անոր վրայ պատկերուած են Քրիստոսի մկրտութեան, Աբգար թագաւորի մկրտութեան, Հայոց արքայական ընտանիքի մկրտութեան, Միածին Որդիին էջքը ի Հայաստան, Մայր Տաճարը եւ հոգեգալուստը: Առաջին անգամ այս կաթսային մէջ Ս. Միւռն օրհնուած է Խրիմեան Հայրիկին կողմէ՝ 1897 թուականի Սեպտեմբեր 14-ին:



Ս. ԻԴԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՆ

Հայ Եկեղեցւոյ մէջ Ս. Իւրի գործածութիւնը կու գայ առաքելական ժամանակներէն: Ըստ Հայ Եկեղեցւոյ աւանդութեան, Քրիստոսի օրհնած իւրը իր հետ Հայաստան բերեր է Հայոց աշխարհի առաջին լուսաւորիչ՝ Ս. Թադէոս առաքեալը: Այս աւանդութիւնը մեզի փոխանցուած է 13-րդ դարու նշանաւոր աստուածաբան ու պատմագիր Վանական վարդապետի «Հայ Ազգի Գովեստը» աշխատասիրութեան մէջ:

Այս մասին նաեւ կը նշէ Վարդան Արեւելցիս իր «Աշխարհացոյց»-ին մէջ: Հայաստան հասնելով, առաքեալը իր հետ բերած սրբազան իւղով օծած է հիւանդ Աբգար թագաւորը եւ գայն բժշկած: Առաքեալը այնուհետեւ մեկնած է Տարօս, ուր մշտադալար եղերդենիի մը տակ թաղած է իւրին շիշը: Ապագային այդտեղ իջած լոյսով եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչին երեւցած տեսիլքին շնորհիւ, Հայոց առաջին հայրապետը կը գտնէ առաքեալին թաղած իւղը եւ այդ իւղը կը միախառնէ առաջին միւռոնին: Աւելի ուշ, նոյն վայրին վրայ Ս. Գրիգոր հայրապետ կը կառուցէ Ս. Յովհաննէս Սկրտիչ եկեղեցին: Ամէն անգամ, երբ Հայրենի հողին վրայ, Մայր Աթոռ Ս. Էջմիածինի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նոր միւռոն կ'օրհնէ, արարողութեան ընթացքին կաթսային մէջ կը հեղու նաեւ լուսաւորչաւանդ Ս. Միւռոնը, որպէսզի Առաջին հայրապետի եւ անոր յաջորդներու օրհնութիւնները փոխանցուին հաւատացեալ ժողովուրդին:

ՍՈՒՐԲ ՄԻՒՈՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Հայ Եկեղեցւոյ մէջ կը կատարուին շարք մը արարողութիւններ, որոնց ժամանակ կը գործածուի Ս. Միւռնոնը: Անոնք են.-

1. Ս. Դրոշմի խորհուրդը, որ անմիջապէս կը յաջորդէ Ս. Սկրտութեան: Արարողութեան ժամանակ հոգեւորականը Ս. Միւռնոնով կ'օժէ մկրտեալի մարմնի ինը մասերը՝ անոր փոխանցելով Ս. Հոգւոյ շնորհները:

2. Ս. Միւռնով կը կատարուին քահանայական, եպիսկոպոսական եւ կաթողիկոսական օծումները: Քահանայական օծման ժամանակ ձեռնադրող եպիսկոպոսը կ'օժէ ընծայեալին ճակատը եւ երկու ձեռքերը, իսկ եպիսկոպոսական ձեռնադրութեան ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կ'օժէ եպիսկոպոսական թեկնածուին ճակատը եւ աջ բթամատը՝ անոր իշխանութիւն տալով ձեռնադրութիւններ կատարել եւ եկեղեցիներ օժել: Մեր Եկեղեցւոյ մէջ հոգեւոր պետը՝ Հայոց Հայրապետը ինք էա Ս. Միւռնով կ'օծուի: Արդարեւ, կաթողիկոսական ձեռնադրութեան ժամանակ, եպիսկոպոսներ Ս. Միւռնոնը կը հեղուն անոր գլխուն, որպէս Հայոց Եկեղեցւոյ ընդհանրական Հայրապետի ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Հայ հաւատացեալը կը համբուրէ նորած հոգեւորականին աջը եւ ճակատը: Հին ատեն, Միւռնով կ'օծուէին նաեւ հայոց թագաւորները:

3. Միւռնով կ'օծեն նորակառոյց եկեղեցւոյ հիմքի խաչապատկեր քարէ սալիկները, գմբեթի խաչը, Ս. Խորա-

նը, մայր դուռը, Յիսուսի հետ Տիրամօր նկարը եւ եկեղեցւոյ սիւները եւ մկրտարանը:

4. Ամէն տարի Յունուար 6-ին՝ Ս. Ծննդեան եւ Աստուածայտնութեան տօնին, Ս. Պատարագէն ետք կը կատարուի ջրօրհնէքի արարողութիւն՝ ի յիշատակ Տիրոջ մկրտութեան: Արարողութեան ընթացքին հոգեւորականը Ս. Սիւռնը կը հեղու Յորդանան գետը խորհրդանշող կաթսային մէջ՝ յիշելով մկրտութեան ժամանակ Յիսուսի վրայ Ս. Հոգւոյ էջքը:



ԻՆՉՊԵՍ ԿԸ ՊԱՏՐԱՍԵՆ Ս. ՄԻՌՈՆԸ

Ս. Միռոնի պատրաստութիւնը կը սկսի միռոնօրհնութենէն ամիսներ առաջ: Աշխարհի տարբեր երկիրներէ Մայր Աթոռ կը բերուին անհրաժեշտ բոլոր նիւթերը: Ս. Միռոնը ունի երկու եական բաղադրիչ. ձիթէնեաց իւղը եւ բալասանը, որոնց հետ կը խառնուին քառասունէ աւելի տաբեր հոտաւետ խունկերու, ծաղիկներու, անուշահոտ բոյսերու արմատներու, ծաղկաջուրերու եւ զանազան տերեւներու հեղուկը: Այս նիւթերը կը պատրաստուին աղօթասացութիւններով եւ յատուկ արարողութիւններով կը լեցուին Ս. Միռոնի կաթսային մէջ:

Վեհափառ հայրապետի ձեռամբ կ'օրհնուին բոլոր նիւթերը, ապա կը լեցուին կաթսային մէջ եւ երեք օրեր շարունակ կ'եփուին կրակին վրայ: Կրակին վրայէն վերցնելէ ետք իւղը մաքուր կտաւով կը քամեն եւ զուտ իւղը կը պարպեն կաթսային մէջ: Միռոնօրհնութենէն քառասուն օրեր առաջ, կաթսան կը գետեղուի Ս. Էջմիածինի Մայր Տաճարի Առագ Ս. Խորանին վրայ, ծածկելով նուրբ հիւսքէ աշխատցուած քօղով:

ՌՎ ԿՕՐՀՆԷ Ս. ՄԻՒՈՆԸ

Մեր եկեղեցւոյ մէջ միւռնօրհնութեան բացառիկ իրաւունքը վերապահուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Միւռնօրհնութիւն կը կատարուի 5-7 տարին անգամ մը: Երջանկութիւն է Կաթողիկոսի մը համար իր գահակալութեան տարիներուն միւռնօրհնութիւն կատարելը: Երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1955 թուականի Հոկտեմբեր 8-ին կատարեց իր առաջին միւռնօրհնութիւնը: Անոր յաջորդեցին հինգ այլ միւռնօրհնութեան արարողութիւններ, մինչեւ անոր վախճանիլը: 1991 թուականի Սեպտեմբեր 29-ին Վազգէն Վեհափառը օրհնեց նորանկախ Հայաստանի Հանրապետութեան առաջին Սուրբ Միւռնը, զայն անուանելով «Անկախութեան Միւռն»: Վազգէն Ա.-ին յաջորդելով Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր առաջին Սուրբ Միւռնի օրհնութիւնը կատարեց 1996 թուականի Սեպտեմբեր 8-ին, զայն կոչելով «Վերածննդեան Միւռն»:

Յաջորդ միւռնօրհնութիւնը տեղի ունեցաւ հինգ տարիներ ետք, 2001 թուականին, երբ ազգովին նշեցինք Հայոց Մեծ Դարձի 1700 ամեակը, նախագահութեամբ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ. Կաթողիկոսին:

Այս բոլորը ցոյց կու տան, որ ազգային եկեղեցական կարեւոր առիթներ եւ այլ հանգամանքներ նկատի առնելով միայն Վեհափառ Հայրապետը կարող է միւռնօրհնութիւն կատարել՝ ի գործ դնելով իրեն վերապահուած եզակի իրաւունքները:

ՍՈՒՐԲ ՄԻՌՈՆԻ ՕՐՔՆՈՒԹԻՒՆԸ

Միւռնօրհնութեան արարողութեան ժամանակ, հազարաւոր հայորդիներու եւ արտասահմանէն ժամանած մեծ թիւով ուխտաւորու ներկայութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսաւորապէս ծաղիկներէ պատրաստուած խոտանիւթերը կը միախառնէ ձիթաիւղին մէջ եւ անոնց վրայ կը հեղու բալասանը: Այնուհետեւ հին Միւռնը կը լեցնէ նորին մէջ, որմէ ետք կ'երգուի «Առաքելոյ Աղանոյ» շարականը:

Ապա, Հայոց Հայրապետը խաչածնէ կ'օրհնէ Ս. Միւռնը՝ Հայ Եկեղեցոյ երեք նուիրական սրբութիւններով: Նախ Տիրոջ Կենաց Խաչի մասունքով, որ Տիրոջ Խաչափայտի մասունքն է, գետեղուած արծաթեայ խաչի մէջ, ապա աստուածամուխ Ս. Գեղարդով եւ վերջապէս Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջով՝ երեք անգամ ըսելով. «Թող օրհնուի եւ սրբուի Միւռնս այս Ս. Խաչի նշանով, Ս. Աւետարանով, Ս. Աջովս Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորիչի եւ օրուան խորհուրդով, Հօր, Որդւոյ եւ Ս. Հոգւոյ անունով...»:

Հայրապետական այս օրհնութենէն ետք, կաթսան կրկին կը ծածկեն նուրբ շղարշով եւ ցնծութեան «Ողջոյն»-ը կը փոխանցուի հազարաւոր հայորդիներուն:

ՏԵՐՈՒՆԻ ԿԵՆՍԱՏՈՒ ԽԱՉԸ

Ամեն ուխտաւոր, որ ներկայ կ'ըլլայ Միւռնօրհնութեան արարողութեան, եզակի առիթ կ'ունենայ ականատես դառնալու պատմական իրադարձութեան մը եւ օրհնուելու Հայ Եկեղեցոյ վերապահուած մասնաւոր սրբութիւններով: Արարողութեան ընթացքին Վեհափառ Հայրապետը Սրբալոյս Միւռնը նախ կ'օրհնէ Ս. Խաչով, որուն մէջ գետեղուած է Տիրոջ Խաչափայտի մասունքը: Սուրբ Գրիգոր Նարեկացին իր «Աղօթամատեան»-ի 93-րդ գլուխը ամբողջութեամբ ձօնած է Ս. Միւռնին: Ան կը բացատրէ, թէ ինկելի եւ պաշտելի Ս. Միւռնը մարդուն համար ոչ մէկ օգտակարութիւն ունի, եթէ չ'օրհնուի Տերունի Կենսատու Ս. Խաչի մասունքով: Հետեւաբար, Միւռնօրհնութեան ժամանակ Հայոց Հայրապետը Տիրոջ Խաչափայտի մասունքով կ'օրհնէ Ս. Միւռնը եւ ներկայ հաւատացեալները:

ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԸ

Հայ եկեղեցւոյ դարերէն եկող աւանդութեան համաձայն, Հայոց Հայրապետը սրբալոյս միւռնը կ'օրհնէ Լաւն աստուածամուխ Ս. Գեղարդով: Գեղարդը Լիզակի այն սուր ծայրն է, որով Դուկիանոս անունով Հռովմայեցի զինուորը խոցեց Յիսուսի կողը, ուրկէ բխեցան ջուր եւ արիւն (Յի 19.34): Ըստ աւանդութեան, համաքրիստոնէական այս սրբութիւնը Հայոց աշխարհի բերուեցաւ Ս. Թադէոս առաքեալի կողմէ: Ս. Մովսէս Խորենացի կը պատմէ, թէ ինչպէ՞ս Քրիստոսի օրերուն ապրող Աբգար թագաւորը անբուժելի հիւանդութենէ կը տառապէր: Ան լսելով Տիրոջ հրաշագործութիւններուն եւ բժշկութիւններուն մասին, Լամակով մը կը խնդրէ Յիսուսէն, որ իրեն այցելէ: Տիրոջ Յարութենէ ետք, Ս. Թադէոս առաքեալ կ'այցելէ Աբգար թագաւորին եւ կը բժշկէ զայն: Ըստ աւանդութեան, Ս. Թադէոս առաքեալ, երբ Հայաստան այցելեց, իր հետ ունէր Ս. Գեղարդը, որով կատարեց բազմաթիւ բժշկութիւններ: Աբգար թագաւոր եւ թագաւորական արքունիքը կ'ընդունին քրիստոնէական հաւատքը:

Բազմաթիւ բուժումներ եւ հրաշքներ կապուած են իսկական Ս. Գեղարդին հետ: Հետեւաբար, Հայոց Հայրապետը, Միւռնօրհնութեան ժամանակ Լախ Տիրոջ Խաչափայտով, ապա Ս. Գեղարդով եւ վերջապէս մեր Հաւատքի Հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի մասունքով կ'օրհնէ Ս. Միւռնը, Հայոց աշխարհը եւ հազարաւոր ուխտաւորները:

ՄԵՐ ՀԱՒԱՏՈՅ ՀՕՐ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶԻ ԱՏԸ

Միռոնօփիսութեան ժամանակ Վեհափառ Հայրապետը Կենաց Խաչով եւ Ս. Գեղարդով Ս. Միռոնը օրհնելէն ետք, աւարտին, մեր հաւատքի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջով կ'օրհնէ զայն: Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջը մեր ազգային-եկեղեցական ամենամեծ սրբութիւնն է: Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան վաւերականութեան կնիքը եւ խորհրդանիշը Ս. Լուսաւորիչի Աջն է: Բազուկի տեսքով Աջին մէջ ամփոփուած են Ս. Գրիգորի աջ ձեռքի մասունքները: Հայ ժողովուրդի պատմութեան մէջ անաբաժան եղած է նուիրական այս մասունքին փրկարար ու ներշնչող ներկայութիւնը, մեր ձեռքբերումներու եւ դժբախտութիւններու, անկումներու ու վերելքներու ժամանակ, միշտ իր օրհնութիւնը բաշխելով բոլորին:

Բացի Միռոնօփիսութեան արարողութենէ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջը դուրս կը բերուի բացառիկ տօներու եւ առիթներու ժամանակ, երբ հայ հաւատացեալին հնարաւորութիւն կը տրուի մօտենալու եւ օրհնութիւն ստանալու Հայոց Մեծ Սուրբի մասունքէն:

Միռոնօփիսէքը ողջ հայ ժողովուրդին համար հոգելից առիթ եւ միջոց է մեր քրիստոնէական եւ ազգային վերանորոգութեան համար:



ԱՂՈԹՔՆԵՐ

«Եւ արդ, Դու նոյն ինքն Տէ՛ր մեր եւ Աստուած, խոնարհեալ յաղաչանս ծառայից քոց՝ առաքեա՛լ զպարարտութիւն ողորմութեան քո ի պտուղ ծիթենւոյս այսորիկ, զոր ետուր յօգտակարութիւն եւ ի փրկութիւն ազգի մարդկան եւ բնակեցո՛ր ի մեզ զշնորհս Հոգւոյդ քո Սրբոյ եւ բարերարի, ի գործակցութիւն եւ ի լրումն խորհրդոց քոց սրբոց պէս պէս պաշտամանց, զորս կատարեմք ի փառս քո»:

(Աղօթք սուրբ Միւռնի օրհնութեան)

«Զօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ եղիցի իւզս այս՝
Իւղ ցնծութեան,
Զգեստ լուսաւոր,
Սրբութիւն հոգւոց եւ մարմնոց,
Կնիք արդարութեան,
Զէն հաւատոյ,
Նահատակ յաղթող ընդդէմ ամենայն գործոց
բանսարկուիս»:

(Աղօթք սուրբ Միւռնի օրհնութեան)

ԷՋ ՄԻԱԾԻՆՆ Ի ՀՕՐԷ

Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա,
ձայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:
Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի,
պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:
Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ.
քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

ԱՌԱՔԵԼՈՅ ԱՂԱԽՈՅ

Առաքելոյ աղանոյ,
իջանելով մեծածայն հնչմամբ ի բարձանց,
ի նմանութիւն լուսոյ փայլման
հրագինեաց անկիզելի գաշակերտան,
մինչդեռ նստեին ի սուրբ վերնատանն:

Անսիրական աղանի,
անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ,
զոր առեալ ի Հօրէ՛ պատմէ
զահաւոր եւ զմիասնգամ գալուստն,
զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս,
ելողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ,
որով առաքեալքն արբեցան
անմահական բաժական,
եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:



ՅԱՆԿ ՆԻԻՔՈՅ

ԱՌԱՏՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՍՐՏԻ ԽՕՍՔԸ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԻՆՔ Ս. ՍԻԻՈՆՆԻ
ՀՈԳԵԲՈՐ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ
ՍԻԻՈՆՆԻ ԿԱԹՍԱՆ
Ս. ԻԴԴԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻԲԻՆԸ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
 ՂԱՐԱՇՐՏԱՆԻՆ
ՍՈՒՐԲ ՍԻԻՈՆՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻԲԻՆԸ ԵԿԵՂԵՅԻՈՅ
 ՍԷՋ
ԻՆՉՊԵՍ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ Ս. ՍԻԻՈՆՆԸ
Ո՞Վ Կ՝ՕՐՀՆԵ Ս. ՍԻԻՈՆՆԸ
ՍՈՒՐԲ ՍԻԻՈՆՆԻ ՕՐՀՆՈՒԹԻԲԻՆԸ
ՏԵՐՈՒՄԻ ԿԵՆՍԱՏՈՒ ԽԱՉԸ
ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԸ
ՍԵՐ ՀԱԲԱՏՈՅ ՀՕՐ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
 ԼՈՒՍԱԲՈՐԻՉԻ ԱՏԸ
ԱՂՕԹՔԵՐ